ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/102

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Կ. Բաբոյանի (լիազորագիր, տրված 15.07.2019թ.)

Է. Գրիգորյանի (լիազորագիր, տրված 15.07.2019թ.)

ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն՝

Մ. Ալեքսանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 85.210.01892)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ /26/10461-2019 գրությամբ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 14.06.2019թ. թիվ 25 գրության հիման վրա, 21.06.2019թ. թիվ /26/10461-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 21.03.2019թ. կնքել է սննդամթերքի մատակարարման պայմանագիր ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ (հետայսու նաև՝ Պատվիրատու): Մատակարարումներն եղել են սահմանված կարգով, մանկապարտեզի տնօրինությունը գոհ է եղել Ընկերության մատակարարած սննդամթերքից (համենայն դեպս Ընկերությանն այդպես էին ասում): Մեկ անգամ է եղել խախտում, որի մասին Ընկերությունը ստացել է էլեկտրոնային ծանուցում, քանի որ Պատվիրատուն ուզում էր ոչ սեզոնային բանջարեղեն: Հեռախոսազրույցի միջոցով Ընկերությունը փորձել է փոխհամաձայնության գալ, բայց չստացվեց: Ընկերությունը գնացել է Պատվիրատուի մոտ և զրուցել տնօրենի հետ, որից հետո կողմերը համաձայնության են եկել: Հանդիպման ընթացքում համաձայնեցին, որ Պատվիրատուի նախընտրած մատակարարներից ինչ-որ մեկը մատակարարի սնունդը, Ընկերությանը փոխանցվել է նշված մարդու հեռախոսահամարը, որից հետո Ընկերությունը կապ է հաստատել վերջինիս հետ, ով սակայն հայտնել է, որ գումարն անհրաժեշտ է փոխանցել նախօրոք: Այս ամենից կարելի է հետևել, որ Ընկերությունը փորձել է փոխհամաձայնության եզրեր գտնել:

Պատվիրատուն անընդհատ պահանջում էր հնարավորիս շուտ պայմանագրի գնի 10 տոկոսը վճարել ու որքան հնարավոր է արագ հարցին լուծում տալ, հակառակ դեպքում

Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագիրը կլուծարվի և Ընկերության տվյալները կուղարկվեն ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինս մասնակցել է բազմաթիվ մրցույթների և ունի կնքված 5 տասնյակից ավելի մատակարարման պայմանագրեր: Բոլորի հետ Ընկերությունն աշխատում է բարեխիճ և երբևիցե որևէ խնդիր չի ունեցել:

Ընկերությունը խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/102 ընթացակարգի շրջանակներում 01.07.2019թ. ժամը 10:00-ին և 15.07.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 15.07.2019թ. ժամը 11:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.06.2019թ. թիվ 25 գրությամբ ներկայացրել է «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/102 ընթացակարգի շրջանակներում 01.07.2019թ. ժամը 10:00-ին և 15.07.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 01.07.2019թ. ժամը 10:00-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն պատշաճ չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները, թերի է մատակարարել ապրանքը: Պատվիրատուն բազմիցս տեղեկացրել է Ընկերությանը, սակայն Ընկերությունն այդպես էլ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքն ամբողջությամբ:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի միջև 21.03.2019թ. կնքվել է «ՀՀ-ԿՄԼՄՀ –ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին ուղղված 15.05.2019թ. թիվ 19 գրությամբ ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ /26/10461-2019 գրությունը, ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 14.06.2019թ. թիվ 25 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի միջև 21.03.2019թ. կնքվել է «ՀՀ-ԿՄԼՄՀ –ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակների 47 անուն ապրանքատեսակ, ընդ որում՝ մատակարարումը պետք է իրականացվեր Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օր հետո, իսկ մատակարարի համաձայնության դեպքում՝ ավելի շուտ, օրեկան կամ շաբաթական՝ մինչև 30.11.2019թ. ներառյալ:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 01.04.2019թ. կնքված 29 ապրանքատեսակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից սնունդը մատակարարվել է 20:30-ին, «թխվածք», «սոդա» և «կակաո» ապրանքները բացակայում են, իսկ 5 կգ կարագը հետ է վերադարձվում՝ փոխելու նպատակով:

Ընկերությանն ուղղված 01.04.2019թ. գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ըստ կողմերի միջև ձեռքբերված բանավոր համաձայնության՝ մատակարարումը պետք է իրականացվեր սույն թվականի ապրիլի 1-ին, մինչև ժամը 17:00-ն ներառյալ, մինչդեռ մատակարարումն իրականացվել է 20:30-ին: Նույն գրությանը կցվել է մատակարարման մեջ տեղ գտած անհամապատասխանությունը՝ միակողմանի հաստատված ակտով:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 08.04.2019թ. կնքված 17 ապրանքատեսակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից դեռևս չի մատակարարվել 5 կգ կարագը, կակաոն, չի մատակարարվել 5 կգ հավի միս:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 25.04.2019թ. կնքված 31 ապրանքատեսակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը չի մատակարարել 6 կգ «պեչենի» ապրանքը:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին ուղղված 23.04.2019թ. գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընկերության կողմից պարբերաբար խախտվել է 21.03.2019թ. կնքված «ՀՀ-ԿՄԼՄՀ –ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով պայմանագրի 2.1.1 կետի և 2.1.7 կետի «բ» ենթակետը, ուստի համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պայմանագիրն ենթակա է միակողմանի լուծման:

Պատվիրատուի կողմից 02.05.2019թ. էլեկտրոնային եղանակով Ընկերությանն ուղարկվել է համապատասխան քանակի «կանաչի», «վարունգ», «բանան», «լոլիկ» և «կանաչ պղպեղ» ապրանքատեսակների մատակարարման թիվ 4 պահանջագիրը, որոնք սակայն «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չեն մատակարարվել:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին ուղղված 15.05.2019թ. թիվ 19 գրությամբ ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ ***վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:***

Այսպիսով՝ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն ստանձնել է վերջինիս և ՀՀ Կոտայքի մարզի «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջև 21.03.2019թ. կնքված «ՀՀ-ԿՄԼՄՀ –

ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին համապատասխան քանակի ապրանք մատակարարելու պարտականությունը: Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը 1 օրից ավելի խախտել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ /26/10461-2019 գրությամբ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**